ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 դեկտեմբերի 2009 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ողջունում եւ օրհնություն ենք բերում ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Բարի սպասումներով ենք դիմավորում Տիրոջ 2010 թվականը: Ռոպեներ անց հնչելու են փարեմուտի զողանջները, իսկ հինգ օրից մեր հոգիները զորանալու են մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան ավետիսով, հրեշտակների՝ «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» օրհներգությամբ: Երկնաձայն այս մաղթանքով սկիզբ կառնի եւ կառաջնորդվի Նոր տարին մեր եւ քրիստոնյա բոլոր ժողովուրդների կյանքում:

Սիրելինե՛ր, ամեն Նոր տարի յուրաքանչյուրիս մտքում եւ հոգում ընկալվում է իբրեւ սկիզբ: Սկիզբը հույս է՝ նորը ստեղծելու, մեր մտածումները, մեր ձգտումները մարմնավորելու, մեր կյանքի ընթացքը բարեփոխելու:

Այսօր մեզ համար քաջալերություն են ձեռքբերումները, որ ունեցանք նախորդ տարի հոգեւոր եւ ազգային մեր կյանքում: Գոհություն Բարձրյալին, խաղաղության մեջ մեր եկեղեցիներից պաշտամունք եւ աղոթք վերառաքեցինք Տիրոջը, առիթներ ունեցանք ուրախանալու մեր սրբատեղիների նորոգության եւ կառուցման ընթացքով, մեր ժողովրդի հոգեւոր կրթության հաջողություններով, հոգեւորականների ձեռնադրություններով: Լավատեսությամբ համակվեցինք Հայրենի մեր պետության իրագործած ծրագրերով եւ ձեռնարկվող բարեփոխումներով, Հայրենիքում ու Սփյուռքում ազգային մեր կյանքի արգասիքներով, որոնցով շենանում եւ բարենորոգվում է մեր ներկան եւ բարի հույսով գծագրվում գալիքը մեր ժողովրդի:

Հուսառատ ենք, որ Նոր տարվա մեջ, հակառակ տնտեսական ճգնաժամի առաջ բերած դժվարությունների, նոր առաջընթաց պիտի ապրեն մեր Հայրենիքը եւ մեր ողջ ժողովրդի կյանքը Սփյուռքում: Բարօր եւ բարգավաճ կյանքի կառուցման, ինչպես եւ ազգային իղձերի իրագործման համար անհրաժեշտ է մեր ջանքերի միավորումը, առ հայրենին անմնացորդ սերն ու նվիրումը: Ազգ ու պետություն համախմբված՝ ջանքեր պիտի գործադրենք հաղթանակի առաջնորդելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարցի խաղաղ կարգավորումը՝ Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի ճանաչումով: Մեր պատմության եւ սերունդների առջեւ պատասխանատվությամբ ջանքեր պիտի գործադրենք նաեւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացներում: Խաղաղությունն ու համագործակցությունը եղել ու մնում են սկզբունքային արժեքներ մեր ժողովրդի

համար, որոնց ուղղությամբ քայլեր ձեռնարկելով՝ հաստատուն պիտի մնանք մեր իրավունքների պաշտպանության դիրքերում: Մեր գերագույն նպատակը Հայրենիքի եւ մեր Եկեղեցու, հոգեւոր եւ ազգային մեր կյանքի, մեր հավատքի պայծառությունն է, որ ամեն ժամ վկայվի գործերով, սիրով ու արդարությամբ միմյանց հանդեպ:

Միրելինե՛ր, տարեմուտի սեմին մեր աղոթքը բարձրացնենք առ Աստված եւ հայցենք կարոտյալներին աջակցություն, վշտացյալներին՝ մխիթարություն, հիվանդներին՝ ապաքինություն: Հայցենք նոր հաջողություններ, նոր ձեռքբերումներ ու հաղթանակներ մեր ժողովրդին:

Դիմավորենք Նոր տարին լավատեսությամբ, մեր հույսերն ու տեսիլքները իրագործելու հավատով: 2010 թվականը նշանակալի դարձնենք ազգային մեր կյանքում՝ ի սեր մեր օրհնյալ գալիքի: Եւ թող տոնականությամբ սկսվող Նոր տարին լինի փառքով լուսազարդ, բարիքով առատ, արդար ու բարի գործերով պայծառ նոր ընթացք մեր կյանքի:

Թող Հայր Աստծո սերը, Քրիստոս մեր Տիրոջ շնորհն ու Սուրբ Հոգու առաջնորդությունը լինեն մեզ հետ այսօր եւ միշտ. Ամեն:

Շնորհավոր Նոր տարի:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻՆ

Դեկտեմբերի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արաբական Միացյալ Էմիրությունների արտաքին գործերի նախարար Անվար Մուհամմեդ Գարգաշին՝ ուղեկցությամբ Արաբական Միացյալ Էմիրություններում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Վահագն Մելիքյանի:

Ողջունելով պետնախարարի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին Սրբությունն իր ուրախությունն ու գոհունակությունը հայտնեց այն հոգածության ու բարի վերաբերմունքի համար, որ Էմիրությունների իշխանությունները ցուցաբերում են տեղի հայ համայնքի հանդեպ, ինչը եւս մեկ ապացույցն է երկու ժողովուրդների միջեւ բարեկամության եւ երկու կրոնների միջեւ դրական երկխոսության ու խաղաղ համակեցության:

Պետնախարար Գարգաշն իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին հանդիպման համար եւ ներկայացրեց Հայաստան իր այցի նպատակն ու անելիքները:

Հանդիպման ավարտին հյուրերը եղան Մայր Աթոռի թանգարաններում: